# ԲԵՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ
# ՀԱՐԻ ՔԿԵԲԵՐՏԻ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ

JOËL DICKER

# LA VÉRITÉ SUR L'AFFAIRE HARRY QUEBERT

— ROMAN —

ՀՏԴ 821.133.1(494)-31 Դիկեր
ԳՄԴ 84(4Շվեց)-44
Դ 481

Դիկեր Ժոել
Ճշմարտությունը Հարի Քվեբերտի գործի մասին: Վեպ / Ժ.
Դ 481 Դիկեր; Թարգմանությունը ֆրանսերենից՝ Ս. Գասպարյանի.- Եր.:
Newmag, 2023.- 680 էջ:

15-ամյա Նոլա Կելերգանը 1975-ի օգոստոսի 30-ին մտնում է անտառ ու անհետանում: Այդ օրը Նյու Հեմփշիր նահանգի Ավրորա քաղաքը զրկվում է հանգստից: 33 տարի անց երիտասարդ գրող Մարկուս Գոլդմանն այցելում է Ավրորա, որպեսզի գրական ոգեշնչում ձեռք բերի ու հետ չընկնի իր հրատարակչի սահմանած վերջնաժամկետից: Նաև ցանկանում է հանդիպել Ամերիկայի ամենահեղինակավոր գրողներից մեկին՝ իր ուսուցիչ Հարի Քվեբերտին: Սակայն սենսացիոն իրադարձությունը տապալում է Մարկուսի ծրագրերը: Հարիին ներկայացվում է Նոլա Կելերգանին սպանելու մեղադրանք, քանի որ նրանց միջև սիրավեպ է եղել: Մեդիան մեղադրում է Հարիին, և Մարկուսը սկսում է իր քննությունը: Հարիի գրական կարիերան ու նույնիսկ կյանքը փրկելու համար Մարկուսը պետք է պատասխանի երեք հարցի՝ ո՞վ է սպանել Նոլա Կելերգանին, 1975-ին ի՞նչ է կատարվել Ավրորայում, և ի՞նչ է պետք իսկական վեպ գրելու համար:

ՀՏԴ 821.133.1(494)-31 Դիկեր
ԳՄԴ 84(4Շվեց)-44

Գլխավոր գործընկեր՝
ԶԱՆԳԱԿ ԳՐԱՏՈՒՆ
zangakbookstore.am

ԶԱՆԳԱԿ
ԳՐԱՏՈՒՆ

ISBN 978-9939-967-03-5
Ժոել Դիկեր «Ճշմարտությունը Հարի Քվեբերտի գործի մասին»
© 2023, «Նյու Մեգ» ՍՊԸ
La Vérité sur l'affaire Harry Quebert © JOËL DICKER, 2020

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել MOOSE ընկերության հետ կնքած պայմանագրով:

## Բովանդակություն


**Անհետանալու օրը** ... 9

Նախաբան **Հոկտեմբեր, 2008** ... 11

Մաս առաջին **Գրողական հիվանդություն** ... 15

31. Հիշողության խորխորատներում ... 16
30. Մարկուս Հրաշալին ... 40
29. Հնարավո՞ր է սիրահարվել 15 տարեկան աղջկա ... 63
28. Որքան կարևոր է ընկնել կարողանալը ... 85
27. Այնտեղ, որտեղ դրախտավարդեր էին աճեցնում ... 107
26. Ն – Ո – Լ – Ա ... 135
25. Նոլայի մասին ... 147
24. Ազգային տոնի հիշողություններ ... 170
23. Այն մարդիկ, որոնք նրան լավ էին ճանաչում ... 184
22. Ոստիկանության հետաքննությունը ... 209
21. Սիրո բանաձևը ... 226
20. Բացության ճաշկերույթի օրը ... 244
19. Հարի Քվեբերտի գործը ... 261
18. Մարթաս Վինյարդ ... 287
17. Փախուստի փորձ ... 306
16. «Չարիքի ակունքները» ... 332
15. Փոթորկից առաջ ... 354

Մաս երկրորդ **Գրողների ապաքինումը** ... 375
14. Այդ հիշարժան օրը՝ օգոստոսի 30, 1975 ... 376
13. Փոթորիկ ... 392
12. Գեղանկարիչը ... 419
11. Նոլային սպասելիս ... 437
10. 15 տարեկան աղջկան որոնելիս ... 451
9. Սև Monte Carlo-ն ... 466
8. Անստորագիր նամակների հեղինակը ... 492
7. Նոլայից հետո ... 520
6. Բարնասկու սկզբունքները ... 533

Մաս երրորդ **Գրողների դրախտը** ... 553
5. Աղջնակը, որը ցնցեց Ամերիկան ... 554
4. Sweet home Alabama ... 581
3. Election Day ... 596
2. Խաղն ավարտվում է ... 616
1. Ճշմարտությունը Հարի Քվեբերտի գործի մասին ... 630

Վերջաբան **Հոկտեմբեր, 2009** ... 673

**Երախտագիտության խոսք** ... 677

*Նվիրում եմ ծնողներիս*

# Անհետանալու օրը

*Շաբաթ, օգոստոսի 30, 1975*

— Կենտրոնական ոստիկանությունը լսում է: Ի՞նչ խնդիր ունեք:

— Ալո: Իմ անունը Դեբորա Կուպեր է, բնակվում եմ Սայդ Քրիկ Լեյնում: Ինձ թվում է՝ հենց նոր անտառում մի աղջկա տեսա. նրան մի տղամարդ էր հետապնդում:

— Կարո՞ղ եք ասել, թե իրականում ինչ է տեղի ունեցել:

— Չգիտեմ: Կանգնել էի պատուհանի դիմաց, նայում էի անտառին ու այնտեղ էլ տեսա այդ աղջկան. փախչում էր ծառերի արանքով... Հետևից վազում էր տղամարդը... Ինձ թվաց, թե աղջիկն ուզում էր ազատվել նրանից:

— Այս պահին որտե՞ղ են նրանք:

— Ես... ես նրանց արդեն չեմ տեսնում: Անտառում են:

— Տիկի՛ն, հենց հիմա Ձեր հասցեով պարեկախումբ եմ ուղարկում:

Այդ զանգով էլ սկիզբ առան մի շարք իրադարձություններ, որոնք ալեկոծեցին Նյու Հեմփշիր նահանգի Ավրորա քաղաքը: Այդ օրը տեղաբնակ մի աղջիկ՝ 15-ամյա Նոլա Կելերգանը, անհետացավ: Եվ նրա հետքն այլևս չգտան:

# Նախաբան

○

○

## Հոկտեմբեր, 2008

(Անհետանալուց 33 տարի անց)

Բոլորը խոսում էին գրքիս մասին: Այլևս չէի կարողանում հանգիստ զբոս-նել Մանհեթենով, չէի կարողանում առավոտյան դուրս գալ մարզավազքի. մարդիկ իսկույն ճանաչում էին ինձ ու բացականչում. «Տեսե՛ք, տեսե՛ք, Գոլդ-մանն է: Էն գրողն է»: Պատահում էր՝ մի քանիսը նույնիսկ հետս հավասար սկսում էին վազել ու դիմում էին իրենց հուզող հարցերով. «Ուրեմն ճի՞շտ է այն ամենը, ինչ նկարագրում եք Ձեր գրքում: Հարի Քվեբերտն իսկապե՞ս նման բան է արել»: «Ուեսթ Վիլիջ» սրճարանում, որտեղ հաճախ էի լինում, որոշ հաճախորդներ առանց քաշվելու գալիս-նստում էին իմ սեղանին, որ-պեսզի ինձ հետ մի երկու բառ փոխանակեն: «Պարոն Գոլդման, սկսել եմ կարդալ Ձեր գիրքն ու չեմ կարողանում կտրվել: Ձեր առաջին գիրքը շատ լավն էր, բայց սա լրիվ ուրիշ է: Ճի՞շտ է, որ այս գիրքը գրելու համար 1 միլիոն դոլար եք ստացել: Քանի՞ տարեկան եք: Երևի մի 30 կլինեք: Ի՞նչ եք ասում՝ երեսո՞ւն էլ չկաք: Ու արդեն այդքան փողի տե՞ր եք դարձել»: Մեր շենքի դռնապանն օրը 2 անգամ դուռը բացում էր իմ առաջ, և ես դռան արանքից հասցնում էի տեսնել, թե նա ինչքան է կարդացել իմ գրքից: Մի օր էլ, երբ գիրքը մինչև վերջ կարդացել էր, երկար ժամանակ չէր թողնում՝ վերելակ նստեմ, որպեսզի իր ապրումները կիսի ինձ հետ. «Այ մարդ, էդ ի՞նչ են արել Նոլա Կելերգանի հետ: Ի՞նչ ահավոր է: Մի՞թե մարդ կարող է այդ աստի-ճանի ստոր լինել, հը՞: Պարոն Գոլդման, հնարավո՞ր է»:

Ամբողջ Նյու Յորքն աշխույժ քննարկում էր իմ գիրքը, որը լույս էր տեսել ընդամենը 2 շաբաթ առաջ, և արդեն բոլոր նշանները կային, որ դառնալու

էր ամերիկյան մայրցամաքի՝ տարվա ամենաշատ վաճառված գիրքը: Բոլորը ցանկանում էին իմանալ, թե ինչ էր տեղի ունեցել Ավրորայում 1975 թվականին: Այդ մասին խոսում էին ամենուրեք՝ հեռուստատեսությամբ, ռադիոյով, լրագրերի էջերում: 30-ս դեռ չէր լրացել, բայց շնորհիվ այդ գրքի, որն ընդամենը իմ երկրորդ գիրքն էր, Ամերիկայի ամենափնտրված հեղինակն էի դարձել:

Մեծ աղմուկ հանած այդ դեպքը, որն ալեկոծել էր ամբողջ երկիրը և իմ վեպի առանցքն էր կազմում, տեղի էր ունեցել մի քանի ամիս առաջ, ամռան սկզբին, երբ պատահաբար հայտնաբերվել էր արդեն 33 տարի անհետ կորած մի երիտասարդ աղջկա դի: Եվ ահա դրանից հետո Նյու Հեմփշիրում ծավալվեցին այն իրադարձությունները, որոնց մասին ստորև պատմելու եմ ընթերցողին. առանց այդ դեպքերի՝ Ավրորա անունով փոքրիկ քաղաքի գոյության մասին, ամենայն հավանականությամբ, ոչ մի ամերիկացի տեղյակ չէր լինի:

# Մաս առաջին

○

○

# Գրողական հիվանդություն

(Գրքի լույսընծայումից 8 ամիս առաջ)

գիրքն ամբողջությամբ՝

ԱՅՍՏԵՂ